ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 10-Հ «25» մարտի 2025 թ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՖՈՆԴԱՅԻՆ-ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Թանգարանների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1" Հաստատել թանգարանների ֆոնդային-գնահատող հանձնաժողովի աշխատակարգի օրինակելի ձևը՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ՝ Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

3/25/2025

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

Հավելված

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի

նախարարի 2025 մարտի 25-ի թ.

N-10-Լ հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՖՈՆԴԱՅԻՆ-ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Թանգարանի ֆոնդային-գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) թանգարանի տնօրենին կից խորհրդակցական մարմին է, որը ստեղծվում է թանգարանային նշանակության առարկաների ընտրության, ձեռքբերման, թանգարանի հավաքածուի ձևավորման և համալրման խնդիրներն իրականացնելու նպատակով՝ համաձայն թանգարանի գիտական խորհրդի կողմից հաստատված «Թանգարանի թանգարանային առարկաների և հավաքածուների համալրման» հայեցակարգի:
2. Հանձնաժողովը կոլեգիալ փորձաքննություն իրականացնող և որոշում ընդունող մարմին է, որն առաջնորդվում է «Թանգարանների մասին» օրենքի և սույն կարգի պահանջներին համապատասխան:

2. ՖՈՆԴԱՅԻՆ-ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

3. Հանձնաժողովը կազմված է 7-13 անդամներից և գործում է 3 (երեք) տարի ժամկետով:
4. Հանձնաժողովը ստեղծվում է թանգարանի ղեկավարի հրամանով: Կազմը համաձայնեցվում է պետական լիազոր մարմնի հետ:
5. Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է թանգարանի գլխավոր ավանդապահը, որը նաև հանձնաժողովի նախագահն է, վերջինիս բացակայության դեպքում՝ հանձնաժողովի կազմում ընդգրկված մեկ այլ ավանդապահ:
6. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են լիազոր պետական մարմնի մեկ, թանգարանների (անկախ ենթակայությունից և սեփականության ձևից) ավանդապահներից մեկական ներկայացուցիչ, ինչպես նաև թանգարանի

բովանդակությանը համապատասխան ոլորտային մասնագետներ, արվեստաբաններ, մշակութաբաններ, պատմաբաններ, հնագետներ, մշակութային արժեքների փորձագետներ:

7. Հանձնաժողովի կազմի երկու երրորդը պետք է լինեն այլ մշակութային կազմակերպությունների մասնագետներ:

9. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

10. Հանձնաժողովի նիստն իրավազոր է հանձնաժողովի անդամների ոչ պակաս, քան 2/3-ի ներկայության դեպքում:

11. Հանձնաժողովի արտահերթ նիստ կարող է գումարվել հանձնաժողովի նախագահի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի պարտականություններն իրականացնող թանգարանի ավանդապահներից մեկը:

12. Հանձնաժողովի նիստերին կարող են մասնակցել նաև հրավիրված անձինք, որոնց ցանկը, ըստ օրակարգի սահմանվում է հանձնաժողովի տվյալ օրվա նիստի օրակարգով:

13. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում է հանձնաժողովի նիստերը և ձևավորում դրանց օրակարգերը՝ համաձայն սույն կարգի 18-րդ կետի,

2) վարում է հանձնաժողովի նիստերը և կազմակերպում որոշումների կայացման գործընթացը:

14. Հանձնաժողովի որոշումները կայացվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում վճռորոշ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

15. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ընտրվում է տվյալ թանգարանի աշխատակիցներից, սակայն չի հանդիսանում հանձնաժողովի անդամ,

2) հանձնաժողովի նիստից առնվազն երեք աշխատատանքային օր առաջ էլեկտրոնային փոստով ուղարկում է հանձնաժողովի անդամներին նիստի օրակարգը, դրանում ընդգրկված հարցերին առնչվող նյութերը,

3) հանձնաժողովի նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն՝ համաձայն N 1 ձևի և արձանագրում հանձնաժողովի ընդունած որոշումները՝ համաձայն N 2 ձևի:

4) արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և անդամները:

16. Նիստերի արձանագրությունները յոթօրյա ժամկետում ուղարկում է հանձնաժողովի անդամներին:

17. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն՝

1) հանձնաժողովի գործառույթներին առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ առաջարկներ ներկայացնել հանձնաժողովի նախագահին,

2) հանձնաժողովի նիստերի արձանագրություններին կցել հատուկ կարծիք:

18. Հանձնաժողովը թանգարանի հավաքածուների համալրման հայեցակարգին համապատասխան՝ հայտնաբերված մշակութային առարկաների պատմամշակութային, գիտական, գեղարվեստական և թանգարանային նշանակության մասին փորձագիտական եզրակացությունների քննարկման արդյունքում որոշում է՝

1) առարկան թանգարանի հիմնական հավաքածուում ընդգրկելու կամ սեփականատիրոջը վերադարձնելու հարցը,

2) առարկայի գնման դեպքում առարկայի գինը (արժեքը),

3) ուսումնասիրում և քննարկում է առարկայի պահպանվածության վիճակը և, թանգարանի հավաքածուի կազմին համապատասխան, սահմանում ընդունված առարկայի հետագա պահպանության վայրը,

4) թանգարանի հավաքածուն համալրող թանգարանային առարկաները կամ հավաքածուները հիմնական կամ գիտաօժանդակ հավաքածուում հաշվառելու հարցը,

5) թանգարանային առարկան կամ հավաքածուն թանգարանից ժամանակավոր արտահանելու դեպքում՝ ապահովագրական արժեքը,

6) առարկան կամ հավաքածուն որպես նվեր ընդունելը կամ չընդունելը (եթե այն թանգարանի ուղղվածությանը չի համապատասխանում),

7) արշավախմբի կողմից ներկայացված առարկաների փաստաթղթավորման որակը (դաշտային օրագրերը և ընդունման ակտերը, հավաքածուի ցուցակները, լեգենդը) և դրա հիման վրա՝ առարկաները կամ հավաքածուները թանգարանի հավաքածուում ընդգրկելու հարցը,

8) թանգարանի հավաքածուի կազմից թանգարանի ուղղվածությանը չհամապատասխանող առարկաների ընտրությունը և փոխանակային հավաքածուում ընդգրկելը,

9) թանգարանի հիմնական հավաքածուից թանգարանային առարկաները գիտաօժանդակ հավաքածու, ինչպես նաև գիտաօժանդակ հավաքածուից հիմնական հավաքածու տեղափոխումը,

10) թանգարանային առարկաների վիճակից ելնելով՝ դրանց պահպանության փոփոխման հիմնավորումը,

11) թանգարանի հիմնական հավաքածուում ընդգրկված թանգարանային առարկայի կամ հավաքածուի ոչնչացման (քայքայման) դեպքում, անկախ մշակութաբանական և արվեստաբանական փորձաքննության եզրակացության հիման վրա, ներկայացնում է առաջարկություն Հայաստանի Հանրապետության թանգարանային առարկայացուցակում համապատասխան փոփոխություն կատարելու մասին,

12) անկախ մշակութաբանական և արվեստաբանական փորձաքննության եզրակացության հիման վրա ներկայացնում է առաջարկություն փոխանակային հավաքածուում ընդգրկված թանգարանային առարկան կամ հավաքածուն այլ թանգարանային համարժեք առարկայով կամ հավաքածուով փոխանակելու վերաբերյալ,

13) քննարկում և հաստատում է ամրակայման, վերականգնման ենթակա թանգարանային առարկաների ցանկը,

14) ըստ որակավորման չափորոշիչների՝ իրականացնում է թանգարանային առարկաների վերականգնողի որակավորման կարգի տրամադրումը,

15) քննարկում և հաստատում է թանգարանային հավաքածուի հետ կապված այլ հարցեր:

19. Քննարկում և հաստատում է թանգարանի հավաքածուի վերահաշվառման կամ ստուգման արդյունքները:

20. Քննարկում է թանգարանի ֆոնդային աշխատանքի հետ կապված մեթոդական և կազմակերպական հարցերը:

21. Հանձնաժողովի որոշումները վերջնական են և պարտադիր կատարման ենթակա թանգարանի տնօրենի կողմից:

22. Թանգարանի ֆոնդային գնահատող հանձնաժողովի արձանագրությունները ենթակա են գրանցման համապատասխան մատյանում, որը նախապես էջակալվում, կարվում է, հավաստվում գլխավոր ավանդապահի և հաշվառման բաժնի վարիչի ստորագրություններով, այնուհետև ստորագրվում է տնօրենի կողմից և կնքվում:

23. Հանձնաժողովի արձանագրությունները և որոշումները մշտական, անժամկետ պահպանության են ենթակա թանգարանային հաշվառման և պահպանման բաժնում:

_____ Ձև N 1

Թանգարանի անվանումը

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № _____

Մշակութային առարկաների վերաբերյալ ֆոնդային-գնահատող հանձնաժողովի «____» _____ թ. ք.

Ֆոնդային գնահատող հանձնաժողովը ներքոհիշյալ կազմով (թվարկել նիստին մասնակցող բոլոր անձանց անունները, ազգանունները և պաշտոնները), թանգարանի հավաքածուների համալրման հայեցակարգին համապատասխան, քննարկեց թանգարանի նախնական հավաքածուում ժամանակավոր պահպանության վերցված մշակութային առարկաների վերաբերյալ փորձագիտական եզրակացություն/ներ/ը.

Ելույթ ունեցան՝

1) _____

(անուն-ազգանուն)

(ելույթի և առաջարկության համառոտ բովանդակությունը)

2) _____

(անուն-ազգանուն)

Ելնելով մշակութային առարկայի (առարկաների) պատմամշակութային, գիտական, գեղարվեստական և թանգարանային նշանակություններից՝ հանձնաժողովը որոշեց ընդունել կամ չընդունել (ընդգծել) ներքոհիշյալ մշակութային առարկաները.

№ №	Առարկայի անվանումը և համառոտ նկարագրությունը	ՆՖ համարը	Արժեքը ՀՀ դրամով	Ծանոթություն
1	**2**	**3**	**4**	**5**

	Ընդամենը			

Հանձնաժողովի քվեարկության արդյունքները՝

Գնման նպատակով թանգարանի ժամանակավոր պահպանությանը հանձնված ներքոհիշյալ առարկաներից ընդամենը հիմնական հավաքածու ընդունվեց

_____
(առարկաների քանակը և ընդհանուր արժեքը ՀՀ դրամով)

Արձանագրությունը կազմված է երկու օրինակից:

Ֆոնդային-գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____

(անուն- ազգանուն) (ստորագրություն)

Քարտուղար՝ _____

(անուն- ազգանուն) (ստորագրություն)

_____ Ձև N 2

Թանգարանի անվանումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № _____

Մշակութային առարկաների վերաբերյալ ֆոնդային-գնահատող հանձնաժողովի «____» _____ թ.

Ֆոնդային-գնահատող հանձնաժողովը քննարկեց քաղաքացի

_____

(անուն-ազգանուն, հասցեն)

թանգարանի ժամանակավոր պահպանությանը հանձնած ներքոհիշյալ մշակութային

առարկա/ներ/ը, փորձագիտական եզրակացություն/ներ/ը և, ելնելով մշակութային առարկայի (առարկաների) պատմամշակութային, գիտական, գեղարվեստական և թանգարանային նշանակություններից, որոշեց ընդունել /կամ չընդունել/ և գնահատել դրանք.

№ №	Առարկայի անվանումը և համառոտ նկարագրությունը	ՆՖ համարը	Արժեքը ՀՀ	Ծանոթություն

			դրամով	
1	**2**	**3**	**4**	**5**
	Ընդամենը			

Արձանագրությունը կազմված է երկու օրինակից:

Ֆոնդային-գնահատող հանձնաժողովի

նախագահ՝

(ստորագրություն)

(անուն- ազգանուն)

Անդամներ՝

(ստորագրություն)

(անուն- ազգանուն)

(ստորագրություն)

(անուն- ազգանուն)

(ստորագրություն)

(անուն-ազգանուն)